

Համագումարը բնաբեց ՀԿՊ Կենտկոմի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմ և ՍՄԿՊ XXII համագումարի պատգամավորներ:

1961 թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի Կոմպարտիայի համագումարի բնաբեմ Կենտրոնական Կոմիտեի պլենումը, որը ՀԿՊ Կենտկո-

մի առաջին ֆաբրուար բնաբեց բնկ. Յա. Ն. Զարոբյանին: ՀԿՊ Կենտկոմի երկրորդ ֆաբրուար բնաբեց բնկ. Հովհ. Մ. Բաղդասարյանը: ՀԿՊ Կենտկոմի ֆաբրուարներ բնաբեցին բնկ. բնկ. Գ. Ա. Տեր-Ղազարյանը, Գ. Թ. Հաբությունյանը և Մ. Ս. Մելիքյանը: Ա. Գ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԻ ՄԱՍԻՆ

1961 թ. օգոստոսի 12-ին ՍՍՄԿՊ Միենիս-տորների Սովետի համաժողովում տվեց Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի ու Հայկական ՍՍԽ Միենիստների Սովետի առաջարկությունը և որոշում ընդունեց Սեֆյան լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով Լեռնա գետի ջրի մի մասը Սեֆյան լիճ շուրջ տալու միջոցառումների մասին: Այդ որոշումը Սովետական Հայաստանի Կոնստիտուցիոն հետագա զարգացման նկատմամբ պարտիայի ու կառավարության լենինյան հոգատարության մի նոր դրսևորումն է և համապատասխանում է մեր ռեսպուբլիկայի աշխատավորների իդեալին: ՍՍՄԿՊ Միենիս-տորների Սովետի որոշման հիման վրա հնարավոր է դառնում ձևավորել լենին ռեսպուբլիկայի միակ խոշոր լենինյան բնակավայրը՝ Սեֆյան լճի պահպանման գործնական միջոցառումների մշակմանն ու իրագործմանը և կոմպլեքսային կերպով լուծել իդեալային, հիդրոէներգետիկայի հարցերը, ավելի ռացիոնալ օգտագործել Սեֆյան-Հրազդան կասկադը՝ ինչպես ռեսպուբլիկայի կարիքների, այնպես էլ Լենգրեովկասի միացյալ էներգետիկ սիստեմի կարգավորման համար:

Սեֆյան պրոբլեմի լուծման միջոցառումների կոմպլեքսում վճռական հարցերից մեկն է Լեռնա գետը գետի Սեֆյան լիճը շուրջ տալը և, որը հնարավորություն կառնվի տարեկան լրացուցիչ կարգով Սեֆյան լիճ լցնել առնվազն 300 միլիոն խորանարդ մետր ջուր: ՍՍՄԿՊ Միենիստների Սովետի որոշման իրագործման նպատակով Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը և Հայկական ՍՍԽ Միենիստների Սովետն ընդունեցին որոշում, որի մեջ շարադրված են այս հարցի լուծման գործնական միջոցառումները:

Ինչպես հայտնի է, Սեֆյան ջրերի օգտագործման նախկին սխեմայով նախատեսված էր շուրջնակ մեծ Սեֆյան և պահպանել փոքրը, որի մակերևույթը կազմում է ամբողջ լճի 15 տոկոսը: Այդ սխեմայի իրականացումը կապված էր նաև խոշոր ծախսերի հետ, որոնք պայմանավորված են ներկայումս մեծ Սեֆյան թափվող գետերի տեղափոխմամբ գետի փոքր Սեֆյան լճի ավազանում դանազան ջրահավաք կառուցվածքների անհրաժեշտությամբ, հիդրոէներգետիկական կառուցվածքները և հողային ֆոնդը լվացումներին ու ուղղումներին պահպանելու, ճահճացման գետ պայքարելու, լճամերձ գյուղերի ջրամատակարարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Այստեղ շենք խոսում այն վնասի մասին, որ կհասնեն լճի ձկնային տնտեսությանը և տեղանքի կլիմային: Ներկայումս ավելի նպատակահարմար է հրաժարվել մեծ Սեֆյան շուրջնակի պահպանելու պլանից, դրա փոխարեն իրագործելով լճի ջրերի օգտագործման նոր սխեման, որի գեղարվեստ նախատեսվում է նրա հորիզոնը պահպանել բարձր մակարդակի վրա (1896 մ. բացարձակ նիշի վրա):

Համառոտակի կանգ առնենք Սեֆյան լճի պահպանման նոր սխեմայի վրա:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հնարավոր է լճի դարավոր ջրային պահարների օգտագործումը դադարեցնել լճի մակարդակի 20 մետր իջեցումից հետո՝ հաշվառել նրա սկզբնական մակերեսից: Ներկայումս լճի մակարդակը իջեցված է շուրջ 14 մետր: Հաշվարկները ցույց են տվել, որ իջեցումը 20 մետրի հասնելուց հետո լճից ամեն տարի կարելի է վերցնել միայն 170 մլն. խմ. ջուր: Պարզ է, որ այդ քանակի ջուրը չի կարող բավարարել ոչ ոռոգման, ոչ էլ Լենգրեովկասի պահանջները: Այստեղից հետևում է, որ ան-

Հրաձեշտ է օգտագործել Հներգիայի և ջրի այլ աղբյուրներ, որոնք հնարավորություն կտան կոմպենսացնել ջրի այն քանակը, որը ներկայումս վերցվում է լճի դարավոր պաշարներից: Ոռոգման պահանջները բավարարելու համար, բացի այն միջոցառումներից, որոնք նախատեսված են ջրաշինարարական պլանում՝ անկախ Սևանա լճի պահպանումից (Ախուրյանի և Ապարանի ջրամբարների կառուցումը և Արաբույանի պաշտավայրի ոռոգման ցանցի օգտակար գործողության գործակցի մեծացումը), անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ աշխատանքներ՝ կապված Սևանա լճի պահպանման հետ. ավելի լրիվ օգտագործել Քասախ և Հրազդան գետերի զարնանային և մասամբ ձմեռային ջրերը, որոնք առանց օգտագործվելու թափվում են Արաքս գետը: Իրա համար նախատեսվում է կառուցել մի շարք ջրամբարների՝ Եղվարդի, Շամիրամի, Գեչրուտի, Կարբիի և այլն (սխեմատիկ կերպով ցույց են տրված գծագրի վրա): Նախատեսվում է նաև ավելի լրիվ օգտագործել Սև-ջուր գետի հոսքը և Արարատյան պաշտավայրի ստորերկրյա ջրերը: Վերջիններս գլխավորապես օգտագործվելու են Հեկտեմերյանի և Արտաշատի շրջանների հողերը ոռոգելու համար: Ներկայումս այդ հողերը ոռոգվում են Սևանա լճի ջրերով: Սև-ջուր գետի հոսանքի որոշ մասը պոմպային կայանի օգնությամբ բարձրացվելու է դեպի Հարավային դերի ջրանոսը, որը ներկայումս ջուրն ստանում է Նույնպես Սևանա լճից: Պոմպային կայանի օգնությամբ բարձրացվելու է Այդր լճի մոտ գոյրս եկող ալյուրներին ջրերի որոշ մասը՝ ավելի բարձր տեղանքի վրա գտնվող հողերի ոռոգման համար: Նույն կերպ պետք է վարվեն նաև Երևան քաղաքում օգտագործվող ջրերի հետ:

Այս բոլոր լրացուցիչ միջոցառումներն իրականացնելուց հետո հնարավոր կլինի շուրջ 210—220 մլն. խմ. ջուր ստանալ ոռոգման համար: Ահհրաժեշտ է նշել, որ նույն նպատակով 170 մլն. խմ. ջուր է բաց թողնվելու նաև Սևանա լճից: Այսպիսով, Սևանա լճի մակարդակի հետագա իջեցումը դադարեցնելուց հետո ոռոգման նպատակների համար կունենանք շուրջ 400 մլն. խմ. ջուր: Նույն ժամանակի ընթացքում նախատեսվում է ավարտել Ապարանի և Ախուրյանի ջրամբարների շինարարությունները և բոլոր այն աշխատանքները, որոնք կապված են ոռոգման ցանցի օգտակար գործողության գործակցի բարձրացման հետ: Այդ բոլոր միջոցառումները, միասին վերցրած, կապահովեն ոռոգման հեռանկարային պահանջները:

Ներկորդ խնդիրը, որ հարկավոր է լուծել լճի մակարդակի հետագա իջեցումը դադարեցնելուց հետո, Սևան-Հրազդանի հիդրոկայանների հզորության լրիվ օգտագործումն է: Վերևում նշված պայմաններում, այսինքն՝ եթե սահմանափակվենք լճից 170 մլն. խմ. ջուր վերցնելով, Սևան-Հրազդան կասկադը կարողանա մինչև 350 մլն. կվտ/ժամ՝ էլեկտրաէներգիա, իսկ 550 հազար կվտ հզորությունից կօգտագործվի միայն 250 հազար կվտ էներգիան ունեցող կասկադի հզորության այդպիսի օգտագործումը, իհարկե, նպատակահարմար չէ: Սևան-Հրազդան հիդրոկայանների հզորության էֆեկտիվ օգտագործման հարցում վճռական դեր է խաղալու Սևանի ավազանին հարևան գետերի ջրերը լիճ փոխադրելը:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այդպիսի, հնարավորություններ կան: Նախատեսվում է Արփա գետի վերին հոսանքների զարնանային ջրերի որոշ մասը (շուրջ 280 մլն. խմ.) փոխադրել Սևանա լիճը, առանց վնաս հասցնելու այդ գետի օգտագործման սխեմային՝ նրա ստորին հոսանքներում:

Արփա գետի վերին հոսանքների տեղափոխման սխեմայի էությունը հետևյալն է. շուրջ 1970 մ. (բացարձակ նիշ) բարձրություններից Արփա գետի ջրերը ինքնահոս կերպով թունելի օգնությամբ տարվելու են դեպի Եղեգիս գետը, որն Արփայի ամենամեծ վտակն է: Այդ նույն գետից 1970—1896 մետր բարձրության սահմաններում առաջացած լրացուցիչ ելքերը պոմպային կայանի օգնությամբ բարձրացվում են դեպի այդ նույն թունելը: Նույն կերպ վերցվելու են Եղեգիս գետի ջրերը: Այնուհետև այդ երկու գետերի ջրերը մի ընդհանուր թունելով փոխադրվելու են դեպի Սևանա լիճը (գծագրերի վրա պլանում և կտրվածքում, ցույց է տրված այդ սխեման):

Ահհրաժեշտ է նշել, որ պոմպային կայանների փոխարեն կարելի է կառուցել պատվարներ: Այդ սխեման ներկայումս մշակվում է «Հայէներգոնախագիծ» ինստիտուտի կողմից: Հնարավորություն կա նաև շուրջ 40 մլն. խմ. ջուր փոխադրել դեպի Սևանա լիճը՝ բերիկ գետի վերին հոսանքներից: Այդ սխեման (նույնպես ցույց է տրված գծագրի վրա) ներկայումս նախագծվում է:

Վերահիշյալ միջոցառումներն իրականացնելուց հետո հնարավորություն կստեղծվի լճի ջրերի ակտիվ օգտագործման հասցնել շուրջ 500 մլն. խմ., իսկ դա նշանակում է, որ ամեն տարի լճից հնարավոր է վերցնել 500 մլն. խմ. ջուր՝ առանց նրա ջրերի դարավոր պաշարները օգտագործելու:

Հարևան ավազաններից Սևանա լիճը բերված ջրերը նախատեսվում է օգտագործել էներգետիկ և մասամբ էլ ոռոգման նպատակների համար: Այդ նոր պայմաններում Սևան-Հրազդան կասկադը ծառայելու է որպես էներգասիստեմների ռեժիմների կարգավորիչ: Այդ ժամանակ Սևան-Հրազդան կասկադը կարտադրի շուրջ 1 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա, և նրա հզորությունը լրիվ օգտագործվի:

Ներկայումս ռեսպուբլիկայում կառուցվող ջերմային կայանների և հիդրոկայանների (Տաթևի կայանը Որոտան գետի վրա) հզորությունը նախատեսված է այն հաշվով, որ այդ կայանների շինարարությունը ավարտելուց հետո (1965) հնարավոր կլինի Սևանա լճից վերցվող տարեկան ջրի ծավալը զգալի չափով նվազեցնել և հասցնել մինչև 500 մլն. խմ. (ներկայումս ամեն տարի լճից վերցվում է

շուրջ 1200 մլն. խմ. ջուր): Անհրաժեշտ է նաև նշել, որ մեր ռեսպուբլիկան ստանալու է որոշ քանակությամբ էլեկտրաէներգիա Անդրկովկասյան միացյալ էներգասիստեմից:

Հողվածում նկարագրված բոլոր հիդրոտեխնիկական և այլ տեսակի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 1968 թ.: Այդ ժամանակից սկսած լրիվ կդադարեցվի Սևանա լճի ջրերի պաշարների օգտագործումը և լիճը կպահպանվի բարձր մակարդակի վրա (1896 մ.): Այդ հաստատուն բարձրության դեպքում Սևանա լճի խորությունը փոքր Սևանում կհասնի 70 մետրի, իսկ մեծում՝ 80 մետրի: Լճի մակերևույթի սկզբնականի համեմատությամբ կփոքրանա ընդամենը 14 տոկոսով:

Ա. ԱՆԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո ազատագրված երկրի առաջ կանգնեց անհետաձգելի խնդիր՝ վերացնել դաշնակների տիրապետության ժանր հետևանքները: Ողբալի վիճակում էր գտնվում ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը:

Անհատական հետամնաց տնտեսություններում կենդանիների ցածր մթերատվությունը, նրանց վատ կերակրումը, հիվանդությունները շուրջ խոշորագույններ էին հանդիսանում ժողովրդական տնտեսության բարձրացման և ռեսպուբլիկայի աշխատավորության բարեկեցության բարելավման գործում:

Անասնապահության պրոբլեմը չէր կարող կարճ ժամանակամիջոցում լուծվել առանց որակյալ կադրերի՝ անասնաբույժների և անասնաբույժների առկայության:

Ռեսպուբլիկայում անասնապահության վերականգնման և նրա հետագա զարգացման համար պատմական նշանակություն ունեցավ բույնիկների պարտիայի Անդրկովկասյան երկրամասի Կոմիտեի 1928 թ. հունիսի 28-ի որոշումը՝ Հայկ. ՍՍԲ-ի մայրաքաղաք Երևանում Անդրֆեդերացիայի անվան Անասնաբուծական ինստիտուտի բացման մասին, որի առաջնահերթ խնդիրն էր լինելու Անդրկովկասյան ռեսպուբլիկաները ապահովել անասնապահության բնագավառի որակյալ կադրերով:

1928 թ. սկսվեցին պարապմունքները ուսանողների առաջին հավաքի հետ (115 հոգի):

Պարապմունքները սկսվում անց էին կացվում Պետական համալսարանի, Գյուղինստիտուտի լսարաններում ու լսարանատրիաններում:

Ինստիտուտի գլխավոր կորպուսի շինարարությունը՝ բառ ականավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ա. Թամանյանի նախագծի, սկսվեց և հիմնականում ավարտվեց 1929 թ., իսկ 1932 թ. կառուցվեցին անասնաբուծական կորպուսը, ուսանողական երկու հանրակացարանները և պրոֆեսորա-դասախոսական կազմի բնակելի շենքեր: Այդ կառուցումներին ամենօրյա մեծ օգնություն էին ցույց տալիս Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Հոգժողկոմառը:

1930 թ. Անասնաբուծական ինստիտուտի շրջայի վրա բացվեց Անդրկովկասյան Անասնաբուծական ինստիտուտը: 1931 թ. Անասնաբուծական և Անասնաբուծական ինստիտուտները միավորվեցին որպես միասնական Համամիութենական Անասնաբուծական-անասնաբուծական ինստիտուտ, որը 1932 թ. կոչվում է Երևանի Անասնաբուծական-անասնաբուծական ինստիտուտ:

Այժմ ինստիտուտը հանձնված է Հայկական ՍՍԲ Գյուղատնտեսության Մինիստրությանը և շատ ավելի անմիջականորեն է ապաստարկում մեր անասնապահության զարգացման կարիքներին:

Ինստիտուտի սակզման գործում եղբայրական մեծ օգնություն են ցույց տվել Մոսկվայի, Լենինգրադի, Կազանի, Խարկովի բարձ-